

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 2/9

ք. Երևան

15 հունվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով հսկիչ դրամարկղային մեքենայի ֆիսկալ հասույթում սխալմամբ մուտքագրված գումարը որպես իրացման շրջանառություն չդիտարկելու վերաբերյալ Ա/Ձ Լևոն Բոչոյանի (ՀՎՀՀ՝ 66855146) դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Լևոն Բոչոյանի դիմում-բողոքում մասնավորապես նշված է, որ 29.09.2020թ.-ին կանխիկ առևտուր անելու ժամանակ դրամարկղում վճարվող գումարը գրանցելիս և կտրոնը տրամադրելու համար շփոթված լինելու կամ անհայտ պատճառով 1750 դրամ տպելու փոխարեն տպվել է 1751500 դրամ: Դիմումին կցված է ՀԴՄ կտրոնը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Լևոն Բոչոյանի ոչ ցանցային հսկիչ դրամարկղային մեքենայի ֆիսկալ հասույթը 2020թ.-ին կազմել է՝ I-ին եռ. 3052800, II-րդ եռ. 3100020, III-րդ եռ. 3477940: Գործունեության ոլորտն է՝ այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

Ա/Ձ Լևոն Բոչոյանը սխալմամբ 29.09.2020թ.-ին ՀԴՄ է մուտքագրել 1751500 դրամ գումար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Լևոն Բոչոյանի կողմից շահագործվող հսկիչ դրամարկղային մեքենան հին սերնդի է, որի միջոցով սխալմամբ ավել գումար մուտքագրվելու հարաբերությունները կարգավորվել են մինչև 23.06.2018թ.-ի գործող ՀՀ կառավարության 26.03.2015թ.-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով, ինչպես նաև հիմք ընդունելով Ա/Ձ Լևոն Բոչոյանի հսկիչ դրամարկղային մեքենայի՝ ըստ եռամսյակների իրացման շրջանառության ծավալները, Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ Ա/Ձ Լևոն Բոչոյանի կողմից 29.09.2020թ.-ին 1751500 դրամ

գումարը ՀԴՄ է մուտքագրվել թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի հետևանք է: Հետևապես՝ 1751500 դրամ գումարը չի կարող ներառվել այն մուտքագրվելու հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող իրացման շրջանառության մեջ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Լևոն Բոչոյանի դիմում-բողոքը բավարարել:
2. Հսկիչ դրամարկղային մեքենայի ֆիսկալ հասույթում 29.09.2020թ.-ին թյուրիմացաբար արտացոլված 1751500 դրամ գումարը որպես իրացման շրջանառություն չդիտարկել:

Հանձնաժողովի նախագահ՝



ՌԱՏԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ